ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կենտրոնական բանկի կարիքների համար՝

ֆինանսական կրթման նյութերի վերաբերյալ հոլովակների նկարահանման ծառայությունների ձեռքբերման նպատակով հրապարակված հրապարակային մրցույթի

ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ Nr. 1

Հայտարարության սույն տեքստը հրապարակվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

ՀՀ կենտրոնական բանկի կարիքների համար՝ ֆինանսական կրթման նյութերի վերաբերյալ հոլովակների նկարահանման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «CBA-2024-002» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի վերաբերյալ ՀՀ Կենտրոնական բանկը ստորև ներկայացնում է 22.03.2024թ. դրությամբ ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ պարզաբանումը՝

1. ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Մասնակցության նախավճար՝ նախավճարը կատարում են բոլոր մասնակիցները առանց բացառության, եթե այո, ապա չընտրվելու դեպքում նախավճարը ենթակա՞ է հետ վերադարձման մասնակցին, թե ոչ: Եթե տրվում է երկու գնառաջարկի տարբերակ, որոնք կարող են միմյանցից տարբեր լինել, նախավճարը որ մի գնառաջարկի հինգ տոկոսի չափով է վճարվում՞:

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

-Նախավճարը ներկայացնում են, բոլոր մասնակիցները, քանի որ համաձայն հրավերի 6.7. կետի Հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկները և մրցույթի մասնակցության նախավճարը: Նախավճարը վերադարձվում է պայմանագիրը կնքվելու օրվան հաջորդող 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու դեպքում նախավճարը վերադարձվում է անգործության ժամկետն ավարտվելուն հաջորդող 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

-Նախավճարը ներկայացվում է Տարբերակ 1 գնային առաջարկի համար առնվազն 5 (հինգ) տոկոսի չափով (քանի որ Տարբերակ 2 այլընտրանքային է).

Տարբերակ 1

Գնային առաջարկ հոլովակների պատարաստման համար, որոնք պետք է լինեն դինամիկ, հետաքրքիր լուծումներով, պրոֆեսիոնալ նկարահանված, բարձր որակի (HD,4K), նախատեսված 18-

40 տարեկանների համար, խոսնակի մասնակցությամբ (դերասան, բլոգեր, ինֆլյուենսեր, և այլք): Հոլովակները պետք է տրամադրվեն վիդեո և ռիլ (reel) ձևաչափով, քանի որ դրանք տեղադրվելու են կրթական կայքերում/հարթակներում և լուսաբանվելու են տարբեր սոցիալական հարթակներում:

ՀՀ կենտրոնական բանկի Մրցութային հանձնաժողովի քարտուղար՝
Սիրան Եգանյան

Պատվիրատու՝ ՀՀ կենտրոնական բանկ